ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

Արշակ Աշոտի Հակոբյանի՝ «Երևան քաղաքի կանաչ գոտիներում հասարակական տարածքների ճարտարապետահատակագծային խնդիրները» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝

ներկայացված ԺԸ .00.01- «ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Հեղինակի կողմից որպես ատենախոսության նպատակ է սահմանված Երևան քաղաքի կանաչ գոտիների և բնական տարածքների պատմաճարտարապետական առանձնահատկությունների ուսումնասիրությունը և արդի ճարտարապետահատակագծային համալիր կազմակերպման վերաբերյալ առաջարկությունների և առաջնահերթությունների փաթեթի մշակումը:

Ատենախոսությունը բաղկացած է տեքստային և գրաֆիկական մասերից: Տեքստային մասը ներկայացված է 140 էջով՝ ներածություն, երեք գլուխ, եզրակացություններ, 106 անուն օգտագործված գրականության ցանկ: Գրաֆիկական մասը ներառում է 181 էջ կազմող հավելվածներ՝ աղյուսակներ, գծագրեր, քարտեզներ, գրաֆիկներ, լուսանկարներ և սխեմաներ:

Ատենախոսության ***ներածությունն*** անդրադառնում է թեմայի արդիականության հիմնավորմանը, և խնդրո առնչությամբ ցայսօր իրականացված հետազոտությունների սեղմ նկարագրի ներկայացմամբ եզրակացվել է, որ Երևանի կանաչ տարածքները լիարժեքորեն ինտեգրված չեն հանրային կյանքի պահանջներին և չեն համապատասխանում քաղաքի զարգացման ընթացքին:

Ներածության մեջ ներկայացված են նաև հետազոտության մեթոդիկան, առարկան և սահմանները: Որպես գիտական նորույթ է դիտարկված Երևան քաղաքի կանաչ գոտիների և համանման լանդշաֆտային համալիրների կազմավորման օրինաչափությունների ու առանձնահատկությունների հետազոտության հիման վրա քաղաքի կանաչ գոտիների պատմաճարտարապետական զարգացման և ձևավորման ժամանակագրության տեղեկատվական բազայի ստեղծումը:

Հետազոտության արդյունքները կարող են ներդրվել քաղաքաշինական ծրագրերի իրականացման, նախագծերի կազմման ընթացքում և ներառվել Երևանի քաղաքաշինության և ճարտարապետության պատմության և մասնագիտական ուսումնական դասընթացներում:

Ատենախոսության թեմայով հրատարակվել է 6 գիտական հոդված, որից երկուսը արտերկրում և դրանցից մեկը՝ համահեղինակությամբ:

Ատենախոսության ***առաջին գլխում*** («***Երևան քաղաքի հասարակական կանաչ տարածքների ձևավորումը և ձևափոխումները XIX-XXI դարերում***») Երևանի զարգացման առանձին ժամանակահատվածների վերլուծությամբ քննվել են տարբեր պատմական աղբյուրների տեղեկությունները, ուսումնասիրվել և համեմատվել են քաղաքի տարբեր տարիների հատակագծերում տեղ գտած՝ կանաչ ծավալները և դրանց փոփոխությունների և պատմաճարտարապետական զարգացման շարժընթացը, յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար կատարվել է հասարակական կանաչ տարածքների խմբավորում, որը կարող է հիմք հանդիսանալ պատմական միջավայրի պահպանության և այդպիսի տարածքներին հատուկ կարգավիճակների տրամադրման և կանաչ գոտիների ցանկի կազմման համար: Ուսումնասիրվել և համեմատության մեջ են դրվել ոլորտին առնչվող օրենքների, կառավարության որոշումների և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի առանցքային դրույթները: Վերլուծվել են հասարակական կանաչ տարածքներիի հատակագծերը, դրանց ներքին կառուցվածքը և ճարտարապետական լուծումները, քաղաքի տարբեր հատակագծերի համեմատությամբ ներկայացվել են դրանց ստեղծման, մակերեսների նվազման ու ճարտարապետահատակագծային վերահատակագծումների ընթացքը, միասնական կանաչապատ համակարգից շեղումները: Առաջարկվել է առանձնահատկությունների հիման վրա դասակարգել/խմբավորել նմանատիպ տարածքները, ինչը հնարավորություն կտա համակարգել առաջացած բազմաթիվ հարցեր ու խնդիրներ, դյուրացնել կառավարումը և հեռանկարային զարգացման հիմք հանդիսանալ:

*«Միջազգային փորձի ուսումնասիրություն»* վերնագիրը կրող *երկրորդ գլխում* արտերկրի փորձի հետազոտության շրջանակներում իրականացվել է կանաչ գոտիների ձևավորման և զարգացման ժամանակագրական վերլուծություն, քաղաքային միջավայրում այդ տարածքների փոխակերպումները տարբեր գործոնների ազդեցությամբ, դրանց ներկայացվող պահանջներն ու նորմավորման խնդիրները, ձևավորման և պահպանման առանձնահատկությունները: Ոլորտում կիրարկվող միջառարկայական մոտեցումների, հանրային կյանքի փոխազդեցությունների, տարածքի վերլուծության գործիքակազմի, տարածքի գնահատման մեթոդների ներկայացմամբ ձևակերպվել են առաջարկություններ մեր երկրում դրանք տեղայնացնելու և հայրենական նախագծային պրակտիկայում կիրառելու վերաբերյալ: Ներկայացվել են նաև կանաչ գոտիների ձևավորման ժամանակակից միտումները և դրանց դրսևորումները արտերկրի մի շարք քաղաքներում իրականացված նախագծերի օրինակով:

Ատենախոսության երրորդ գլխում ներկայացված են ***Երևան քաղաքի կանաչ գոտիների հեռանկարային զարգացման ուղղությունները:***

Տարածքների ուսումնասիրության՝ արտերկրում կիրառվող մեթոդներով և գործիքակազմով դասակարգվել են Երևանի հասարակական կանաչ տարածքները՝ ձևակերպելով առաջարկներ ՀՀ նորմատիվ իրավական ակտերում այնպիսի փոփոխություններ (լրացումներ) կատարելու վերաբերյալ, որոնք կապահովեն կանաչ տարածքի հասարակական սպասարկման մակարդակի բարձրացումը: Առաջարկվել է Երևանի կանաչ տարածքների պահպանման տեղեկատվական համակարգի կառուցվածք և ցանկ՝ ըստ ժամանակագրության և ճարտարապետահատակագծային առանձնահատկությունների, որը կարող է հիմք դառնալ դրանց գնահատման, առաջնային կարգավորումների, չափանիշների ճշգրտման, կարգավիճակների սահմանման, փոփոխման և վերահսկման համար: Ներկայացվել են նախագծման ուղեցույցներ նոր ձևավորվող, պահպանվող, բարեկարգվող և վերակառուցվող տարածքների համար: Կարևորվել է վերահսկման մեխանիզմի թափանցիկության բարձրացումը, ըստ այդմ, առաջարկվել է ստեղծել վերահսկման հանրային

մասնակցության մեխանիզմներ, որոնք կապահովեն կանաչ տարածքների պահպանումը: Առաջարկվել է նախագծման փուլերից առաջ իրականացնել միջդիսցիպլինար հետազոտություններ Երևան քաղաքի հանրային կյանքի և տարածքների փոխազդեցության վերաբերյալ՝ ստեղծելով հիմնավոր ճարտարապետական լուծումների հնարավորություն: Մշակվել է Երևան քաղաքի կանաչ գոտիների ազդեցության սահմանների հատակագիծը, որը ցույց է տալիս հարակից գոտիների հասանելիությունը, հասարակական կանաչ տարածքների մեկուսացվածությունը: Հասարակական սպասարկման մակարդակը կանաչ գոտիներում բարձրացնելու համար առաջարկվել է այդ տարածքներում սահմանել պարտադիր գործառական և տարածքային բաղադրիչներ՝ հաշվի առնելով հարակից կառուցապատված գոտիները:

Ընդհանուր առմամբ, թեմայի շրջանակներում հեղինակը կատարել է արխիվային նյութերի, նախկինում մշակված նախագծերի, պաշտոնական փաստաթղթերի, նորմատիվ իրավական ակտերի, թեմային առնչվող՝ արտերկրում մշակված նախագծերի և իրականացված ծրագրերի բավականին ընդգրկուն ուսումնասիրություններ, որոնք հիմք են հանդիսացել հետազոտության արդյունքների համակարգման, ամփոփման և եզրակացությունների ձևակերպման համար:

Գնահատելով ատենախոսի կատարած աշխատանքը, հարկ եմ համարում ներկայացնել որոշ նկատառումներ ատենախոսությունում տեղ գտած առանձին թերացումների վերաբերյալ.

1.Շարադրանքում կան լեզվական/շարահյուսական անհարթություններ ու վրիպակներ, որոնք կարոտ են խմբագրման.

2.Որոշ չափով խնդրահարույց է ատենախոսության տարբեր գլուխների ծավալների համամասնությունը, մասնավորապես, առաջին գլուխը ներկայացված է 59 էջ կազմող տեքստային շարադրանքով և 16 հավելվածով, երկրորդ գլուխը՝ 41 էջ կազմող տեքստային շարադրանքով և 16 հավելվածով, իսկ երրորդ գլուխը՝ 16 էջ կազմող տեքստային շարադրանքով և 8 հավելվածով.

3.Ճշգրտման կարիք ունեն ներկայացված առանձին տվյալներ, մասնավորապես, ատենախոսության 50-րդ էջում որպես «Սիրահարների այգու» հիմնադրման տարեթիվ է նշված 2005 թվականը՝ զբաղեցրած 1.6հա տարածքով, մինչդեռ 1.2.աղյուսակում (էջ 58) ոպես հիմնադրման տարեթիվ է նշված 1949 թվականը, իսկ մակերեսը՝ 20-100 հա (ըստ դասակարգման՝ միջին չափի զբոսայգի): Բացի այդ, պարզ չէ, թե նույն աղյուսակում ինչու է զբոսայգիների դասակարգման հիմքում դրվել ոչ թե «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» հայաստանյան շինարարական նորմերի 14-րդ աղյուսակում սահմանված չափերը, այլ արտերկրում տպագրված ուսումնական ձեռնարկի տվյալները.

4.Ատենախոսության 3-րդ գլխին առնչվող 37-րդ հավելվածում (Կանաչ տաչածքների նախագծման ուղեցույցներ) ներկայացվել են այլ հետազոտողների առաջարկություններ: Ճիշտ է, տրված են համապատասխան հղումներ, սակայն ցանկալի կլիներ, որ ներկայացվեին խնդրո առնչությամբ հեղինակի դիրքորոշումները կամ սեփական մշակումները:

Թվարկված առանձին բացերով հանդերձ, ատենախոսությունն իր ընդհանրության մեջ կարող դիտարկվել որպես ճարտարապետության բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի և համապատասխան լուծումների առաջադրում: Այն համապատասխանում է ՀՀ կառավարության 08.08.1997թ. N°327 որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերով սահմանված պահանջներին, իսկ հեղինակը՝ Արշակ Աշոտի Հակոբյանն արժանի է ԺԸ.00.01 «ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս՝ Ճարտարապետության դոկտոր,
ՃՇՀԱՀ-ի Քաղաքաշինության ամբիոնի դոցենտ Ա.Ա.Թովմասյան

ՃՇՀԱՀ-ի գիտական քարտուղար
Տեխ.գիտ.թեկնածու, դոցենտ Լ.Հ.Լևոնյան

24.05.2022թ.